«ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի ՀԵՂԻՆԱԿԻ ՊՐՈԲԼԵՄԸ

Գրեֆ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Տարիներ առաջ կատարված աղբյուրագիտական մանրակրկիտ ուսումնասիրությունները թվում էր թե վերջնականապես լուծել են Աշխարհացույցի գրության ժամանակի և հեղինակի հետ կապված առեղծվածը. հաջողվել է վերջնականապես պարզել, որ նրա հեղինակն է հայ ականավոր մաթեմատիկոս Անանիա Շիրակացին։ Սակայն վերջին տարիներս որոշ ուսումնասիրողներ նորից սկսեցին կասկածանքներ հարուցել Աշխարհացույցի ինչպես գրության ժամանակի, այնպես էլ նրա հեղինակի վերաբերյալ։ Այդ կասկածանքները խտացված փաստերով արտահայտված են դոցենտ Մ. Մ. Խաչատրյանի նորերս լույս տեսած «VII դարի Աշխարհացույցի մասին» խորագրով հոդվածում, որը լույս է տեսել «Պատմա-բանասիրական հանդեսի» 1968 թվականի № 4-ում։

Աշխարհացույցը հին հայկական պատմա-աշխարհագրական բովանդակությամբ մեծարժեք հուշարձաններից է, նրա ժամանակի և հեղինակի հարցի պարզաբանումը հայագիտության կարևոր հարցերից մեկն է, ուստի հասկանալի է, թե ինչու «Հանդեսի» խմբագրությունը իր «Բանավեճեր ու քննարկումներ» բաժնում տեղ է հատկացրել Խաչատրյանի հոդվածին՝ նպատակ ունենալով այդ հարցը բանասիրական լայն քննարկման խնդիր դարձնել։ Ընդառաջելով «Հանդեսի» խմբագրության այդ շնորհակալ նախաձեռնությանը, մենք ցանկանում ենք անդրադառնալ Խաչատրյանի այդ հոդվածին ու նրա առաջ քաշած հարցերին։

Խաչատրյանի նշված հոդվածի կեսից ավելին, պետք է ասել, Աշխարհացույցի գրության ժամանակին ու հեղինակին չի վերաբերում, այլ՝ նրա պարունակած նյութին։ Նա այստեղ քննադատում է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանին, որ վերջինս Աշխարհացույցը տարբեր երկրների քարտեզների հավաքածու է համարում։ Այս հարցի քննարկումը մեր ներկա հոդվածի նպատակից դուրս է։

Աշխարհացույցի գրության ժամանակի և հեղինակի հարցի քննարկումը Խաչատրյանը սկսել է պատմական մի էքսկուրսով՝ հարցի ուսումնասիրության բնագավառում և եկել անվերապահ այն եզրակացության, որ սխալվում են բոլոր այն հեղինակները, որոնք Աշխարհացույցը վերագրում են Անանիա Շիրակացու հեղինակությանը (նա նկատի ունի պրոֆ. Ք. Պատկանյանին, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Վ. Ջալոյանին, պրոֆ. Թ. Հակոբյանին, պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանին և ուրիշների)։

Անցնելով բուն նյութին, նա իր առջև մի հիմնական խնդիր է դրել՝ Շիրակացու Տիեզերագիտության և Աշխարհացույցի մեջ փնտրել-գտնել այնպիսի հակասություններ, որոնք հիմք տան իրեն ապացուցելու նրանց տարբեր հեղինակների աշխատություններ լինելը։ Ըստ որում, իր եզրահանգումներին ծանր կշիռ տալու նպատակով նա միակողմանի բերում է մի շարք ուսում-

նասիրողների կարծիքներ (Ն. Պիգուլևսկայա, Վ. Զալոյան, Գ. Խրլոպյան, Ս. Արևշատյան), որոնք իբրև թե նշված բնագրում նույնպես նկատել են որոշ հակասություններ և այդ հիմքի վրա նա կառուցում է իր հետևյալ եզրակացությունը. «Այդ հակասությունների մասին ժամանակին գրվել է։ Դրանցից և մի շարք ուրիշ փաստերից ելնելով ակադ. Հ. Մանանդյանը Աշխարհացույցը համարում է IX դարի աշխատություն։ Ժամանակագրական այդ տեսակետը պաշտպանել են Յ. Մարկվարտը, Սեն-Մարտենը, Վիստոն եղբայրները և Կիպերտը» (էջ 90)։

Մեզ հայտնի չէ, որ Վիստոն եղբայրները առաջադրած լինեն Աշխարհացույցը IX դարի աշխատություն համարելու հարցը[1]։ Խաչատրյանը, ինչպես երևում է, տեղյակ չէ, որ Մարկվարտը հետագայում վերանայել է իր նախկին տեսակետը։ Աշխարհացույցի հեղինակ է համարել Շիրակացուն և իր հիացմունքը հայտնել նրա նկատմամբ, որ կարողացել է ապշեցուցիչ ճշտությամբ տալ Հայաստանի աշխարհագրությունը 387 թ. բաժանումից առաջ[2]։ Վերջապես, Կիպերտը Աշխարհացույցի ժամանակն է համարել ոչ թե IX դարը, այլ V և նրա հեղինակն է համարել Խորենացուն[3]։

Աշխարհացույցը Շիրակացու հեղինակությանը վերագրելու շուրջը հոդվածներ ու գրքեր են գրվել, ըստ որում, գրվել են մասնագետ աղբյուրագետների կողմից, մատնացույց են արվել տասնյակ անհերքելի կովաններ։ Հարց է առաջանում, Խաչատրյանն արդյոք անդրադարձե՞լ է այդ կովաններին, փորձե՞լ է հերքել նրանցից մեկն ու մեկը։ Դժբախտաբար, ո՛չ։ Խաչատրյանի համար դրանք կարծես գոյություն չեն ունեցել։

Պրոֆ. Ք. Պատկանյանն անվիճելի տվյալներով ապացուցել է, որ Հայաստանի չորս մասի բաժանվելը (որը կատարվել է VI դարում), VI դարի հեղինակ Կոստանդին Կոսմա Հնդկաչուի աշխատությունը Աշխարհացույցի սկզբնաղբյուրներից մեկը հանդիսանալը, Աշխարհացույցի մեջ մաթեմատիկական որոշ հաշվումների առկայությունը և այլն, վկայում են, որ դրա հեղինակը ապրած պետք է լինի VII դարում և հանդիսացած լինի մաթեմատիկոս անձնավորություն, իսկ այդպիսի մեկը կարող էր լինել Անանիա Շիրակացին[4]։ Խաչատրյանը փորձե՞լ է քննության առնել այդ հարցերը և մերժել դրանք։ Ո՛չ։

Մենք, ուսումնասիրելով Մաշտոցի անվան Մատենադարանի Աշխարհացույցի 36 ձեռագրերը, ցույց ենք տվել, որ Աշխարհացույցի հնագույն ընդօրինակությունները մեծ մասամբ հանդիպում են Շիրակացու աշխատությունը պարունակող ձեռագիր ժողովածուներում, որ Աշխարհացույցի ընտիր ընդօրինակությունները վերնագրված են լինում «Երկրաչափք», իսկ Գրիգոր Մագիստրոսը այդ վերնագրով աշխատության հեղինակ է ճանաչում Անանիա Շիրակացուն։ Աշխարհացույցի ձեռագիր և տպագիր բնագրերի համեմատական ուսումնասիրության հիման վրա մատնացույց ենք արել բնագրային,

---

[1] Mosis Chorenensis Historiae Armeniacae, Libri III. Accedit ejusdem Scritoris Epitome Geographie, London, 1736 (տե՛ս առաջաբանը)։

[2] J. Markwart, Südarmenien und Tigrsquellen, Wien. 1930, էջ 56—57։

[3] Տե՛ս նրա հոդվածը՝ Uber die Zeit der Abfassung des dem Moses von Chorni zugeschriebenen geogr. Kompendiums, հրատարակված „Monatsberichte der Königl. Preuss..."-ում։

[4] К. Патканов, Армянская география VII века, СПб, 1877 (տե՛ս առաջաբանը)։

պատմական, լեզվական և տիեզերագիտական մի շարք տվյալներ հօգուտ Շիրակացու[5]։ Փորձե՞լ է արդյոք Խաչատրյանը հերքել այդ փաստերից մեկն ու մեկը։ Ո՛չ։

Եվրոպացի գիտնական Ռոբերտ Հեուսենը, մանրամասն քննության առնելով Հայաստանի 387, 536 և 591 թվականների բաժանումների մասին Աշխարհացույցում եղած տվյալները, եկել է անվերապահ այն եզրակացության, որ Աշխարհացույցի գրության ժամանակն է եղել 591—640 թթ., իսկ այդ ժամանակը լիովին համապատասխանում է Անանիա Շիրակացու գործունեության շրջանին[6]։ Փորձե՞լ է Խաչատրյանը հակառակն ապացուցել։ Ո՛չ։

Նախքան Խաչատրյանի առաջ քաշած փաստարկների քննությանն անցնելը, մենք անհրաժեշտ ենք համարում փոքր-ինչ անդրադառնալ այն բնագրերին, որոնց վրա հենվում է Խաչատրյանը և մեջբերումներ է կատարում նրանցից։ Այս կարևոր է, որովհետև Աշխարհացույցի հեղինակի և Շիրակացու տիեզերագիտական տեքստերը, ինչպես հայտնի է, ժամանակի ընթացքում ենթարկվել են զգալի փոփոխությունների. ընդօրինակող գրիչները կամ խմբագիրները, ըստ իրենց նախասիրության, փոփոխել են նախնական տեքստերը, կրճատել են կամ ընդմիջարկություններ են կատարել։ Պարզված է, օրինակ, որ Մատենադարանի շուրջ քառասուն ձեռագիր Աշխարհացույցները հինգ տարբեր խմբի են պատկանում։ Չենք խոսում դեռ այն մասին, որ Աշխարհացույցը և Շիրակացու տիեզերագիտական աշխատությունը մեզ են հասել իրարից զգալի տարբերվող երկուական խմբագրությամբ՝ ընդարձակ ու համառոտ։ Թե Աշխարհացույցը դարերի ընթացքում ինչպիսի մեծ փոփոխությունների է ենթարկվել, այդ ակներև դարձավ Սեն-Մարտենի հրատարակած Աշխարհացույցի բնագրի և ձեռագիր հին ընդօրինակությունների համեմատական ուսումնասիրությունից, երբ պարզվեց, որ Սեն-Մարտենի՝ իր հրատարակած Աշխարհացույցի վերցրած բոլոր կովանները հենված են ուշ ժամանակներում կատարված ընդմիջարկությունների վրա։

Խաչատրյանի համար, ինչպես երևում է, աղբյուրագիտական այս կարևոր հանգամանքը նշանակություն չունի. նա օգտագործել է «Армянская география VII века» աշխատությունը, ուր Աշխարհացույցի հայկական բնագրին զուգընթաց տրված է նաև նրա ռուսերեն թարգմանությունը։ Նկատենք, որ Պատկանյանի հրատարակած այդ բնագիրը պատկանում է համառոտ խմբագրության խմբին և սխալաշատ է։ Ցավալի է նաև նշել, որ Խաչատրյանը Աշխարհացույցի՝ Պատկանյանի հրատարակած բնագրից վերցրած իր փաստերը համեմատության մեջ չի դրել թեկուզ Սուքրյանի հրատարակած ընդարձակ բնագրի հետ, որն ամենից հինն է՝ տեսնելու, թե ինչպես են նրանք շարադրված այնտեղ։

Նախասովետական շրջանում հայտնի էր Շիրակացու Տիեզերագիտության բնագրի միայն համառոտ ու աղճատված խմբագրությունը, որը հրատարակել էր պրոֆ. Ք. Պատկանյանը[8]։ 1940 թ., սակայն, հայտնի դարձավ և հրա-

---

5 Ա. Գ. Աբրահամյան, Խորենացուն վերագրվող Աշխարհացույցի հեղինակի հարցի շուրջը, Երևան, 1940։

6 R. H. Hewsen, Date and authorship of the Ašxarhac'y'c (տե՛ս „Revue des études Arméniennes", t. IV, էջ 409—432)։

7 Տե՛ս Ք. Պատկանյանի և Ա. Աբրահամյանի վերը հիշված աշխատությունները։

8 «Անանիայի Շիրակունու մնացորդք բանից», ՍՊբ, 1877, էջ 34—75։

տարակվեց այդ աշխատության՝ փոփոխություններից և աղճատումներից համեմատաբար ազատ խմբագրությունը։ Խաչատրյանն այստեղ ևս, դժբախտաբար, աչքաթող է արել Տիեզերագիտության ընդարձակ բնագիրը և դիմել է Պատկանյանի աղճատված բնագրին՝ տողատակ տալով հետևյալ ծանոթագրությունը. «Քաղվածքները Տիեզերագիտությունից բերված են Ք. Պատկանյանի «Անանիայի Շիրակունւոյ մնացորդք բանից» գրքից, իսկ Աշխարհացույցից՝ Պատկանյանի հրատարակության («Армянская география VII века», СПб., 1877) հայերեն տեքստից» (էջ 91)։ Արդարությունը, սակայն, պահանջում է ասել, որ միշտ չէ, որ Խաչատրյանը հետևում է իր այդ խոստմանը. օրինակ՝ այդ ծանոթագրված 91-րդ էջում Շիրակացու Տիեզերագիտության բնագրից մեջ է բերված մի հատված (12—19 տողերը ներքևից) և մատնացույց արված էջ 1-ը, այնինչ այդ հատվածը կրճատված է համառոտ խմբագրության մեջ, և Խաչատրյանը այն վերցրել է Տիեզերագիտության ընդարձակ խմբագրության բնագրից։

Եթե հավատալու լինենք Խաչատրյանի հայտարարությանը, իսկ հետո կտեսնենք, որ դժվար է հավատալ, նա խնդիր է դրել Աշխարհացույցը ուսումնասիրել ո՛չ թե աղբյուրագիտական, այլ միայն տիեզերագիտական և քարտեզագրական տեսանկյունով, որոնք, իր ասելով, վրիպել են նախորդ ուսումնասիրողների ուշադրությունից։ Այդ մասին նա գրում է. «Վերոհիշյալ բոլոր հեղինակները (այսինքն՝ Աշխարհացույցով զբաղվող ուսումնասիրողները—Ա. Ա.) հարկ եղած ուշադրություն չեն դարձրել Աշխարհացույցի հետ կապված հարցերի քարտեզագրական և տիեզերագիտական լուսաբանության վրա, ուստի մենք անհրաժեշտ ենք համարում ստորև անդրադառնալ դրանց, նաև այդ տեսակետներից» (էջ 91)։ Ցավով պետք է նշենք, որ Խաչատրյանն իր այս հավաստիացման մեջ անկեղծ չէ. արդարությունը պահանջում է ասել, որ Խաչատրյանից շատ առաջ և շատ ավելի հանգամանորեն նրա առաջ քաշած հարցերի մեծ մասն արծարծված են հանգուցյալ ակադ. Հ. Մանանդյանի կողմից[9]։ Ավելին, Մանանդյանի առաջ քաշած այդ հարցերը քննարկման խնդիր են դարձել հայ աղբյուրագիտության մեջ[10]։

Այժմ քննության առնենք Խաչատրյանի՝ Աշխարհացույցում և Շիրակացու Տիեզերագիտության մեջ մատնացույց արած 11 հակասությունները և տեսնենք որքան ճիշտ են դրանք, պահպանելով այն հերթականությունն ու ենթագրերը, որ ընտրել է նա։

1. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼԻՔ ՆՅՈՒԹԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Խաչատրյանի կարծիքով Աշխարհացույցի հեղինակն անտիկ գիտության հետևող է, նույնիսկ գտնում է, որ «Աստվածաշնչում շարադրված աշխարհագրական տեղեկությունները... զուրկ են բավարար հիմունքներից...», իսկ Շիրակացին՝ հակառակը, եկեղեցական հայրերի ուսմունքի հետևող է (էջ 91)։ Խաչատրյանն իր հայտնած այդ տեսակետը հիմնավորելու նպատակով բերում է Աշխարհացույցի հեղինակի հետևյալ խոսքերը. «Յաղագս աշխարհագրութեան յաստուածային գիրս ոչ ուրեք գտանեմք ոճով ասացեալ, այլ դոյզն

9 Հ. Մանանդյան, Խորենացու առեղծվածի լուծումը, Երևան, 1934, էջ 55—56։
10 Ա. Գ. Արրահամյան, նշվ. աշխ., էջ 68—73։

ինչ դուն ուրեք, և այն դժուարահաս և տաժանելի։ Արդ վասն զի անհասք դոցա եղեալ մեր՝ յարտաքինսն հարկաւորիմք ձեռնարկել» (չենք ուղղում նկատվող բնագրային և կետադրական սխալները)։ Խաչատրյանը ճիշտ չի հասկացել մեջ բերված գրաբար նախադասության իմաստը. խոսքն այստեղ ո՛չ թե այն մասին է, թե Աստվածաշունչը «զուրկ է բավարար հիմունքներից», այլ որ Աստվածաշնչում աշխարհագրության մասին չկան ամփոփ տեղեկություններ, եղածները ցրված են և դժվարամատչելի, ուստի նա հարկադրված է դիմելու արտաքին (այսինքն անտիկ) գիտնականների աշխատություններին, որոնք շրջագայել են աշխարհի չորս կողմը, չափագրել և կազմել են երկրագրական աշխատություններ։

Որ աշխարհագրության հեղինակը Շիրակացու նման քրիստոնյա մատենագիր է, հետևում է Աստվածաշնչին և նրանից մեջբերումներ է անում, այդ դժվար չէ նկատել բնագրի բազմաթիվ հատվածներում. Աշխարհացույցում մեջբերումներ կան Ծննդոց գրքից (Ա, 9, Ա, 10), Հոբի գրքից (ԼԸ, 18), Եսայու մարգարեությունից (ԽԵ, 18), Սաղմոսից (ՁԵ, 12—13), Առակաց գրքից (ԽԵ, 19) և այլն։

Շիրակացու հայացքները Աշխարհացույցի հեղինակի հայացքներին հակադրելու նպատակով Տիեզերագիտության ընդարձակ խմբագրությունից Խաչատրյանի բերած հատվածը ճիշտ չի արտահայտում հեղինակի բնագիտական հայացքը։ Մատնացույց արված նախադասության մեջ Շիրակացին քննադատում է անտիկ մատերիալիստ գիտնականներին դոյի հարցում՝ նշելով, որ հնթանոս գիտնականները «...զաստուած ոչ կամեցան ճանաչել և պատճառս լինելութեան զհիլէ ասացին»[11]։ Անժխտելի փաստ է, որ Շիրակացին գոյի հարցում մատերիալիստ չէ, այլ՝ իդեալիստ։ Իրողությունն այն է, որ ինչպես Աշխարհացույցի հեղինակը, այնպես էլ Շիրակացին հետևում են իրենց ժամանակի իշխող գաղափարախոսությանը։ Միջնադարյան ծանր իրականության մեջ այլ կերպ նրանք վարվել չէին էլ կարող։ Փաստ է նաև այն, որ տիեզերագիտական բազմաթիվ հարցերում նրանք գերի չեն մնում Աստվածաշնչին, դուրս են գալիս սահմանված կրոնական դոգմաների շրջանակներից և հետևում անտիկ առաջադեմ գիտնականներին։ Այսպիսով, ոչ մի հակասություն գոյություն չունի Աշխարհացույցի հեղինակի և Շիրակացու հայացքներում։

2. ԵՐԿՐԻ ՁԵՎԻ ՀԱՐՑԸ

Խաչատրյանը գտնում է, որ Աշխարհացույցի հեղինակը «...ոչ միայն ընդունում է երկրի գնդաձևությունը, այլև այդ գնդի վրա համապատասխան աստիճանային հաշվարկումներ է կատարում՝ գնդին հատուկ մաթեմատիկական եղանակներով» (էջ 92), իսկ Շիրակացին, դրան հակառակ, երկիրը քառակուսի տարածություն է համարում։

Այս հարցը ժամանակին բարձրացրել է ակադ. Հ. Մանանդյանը. «Շիրակացին և Աշխարհացույցի հեղինակը,—գրել է նա,—միանգամայն տարբեր հասկացողություններ ունեն երկրի ձևի մասին։ Աշխարհացույցի հեղինակը, համաձայն Պտոլեմեոսի տեսության՝ երկիրը համարում է գնդաձև,

---

11 Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար, Երևան, 1940, էջ 1 (այսուհետև այս աշխատությունը ցույց է տրվելու բնագրում ՇՏ հապավումով)։

իսկ Անանիա Շիրակացին, որ կանգնած է քրիստոնեական մեկնիչների տեսակետի վրա՝ ենթադրում է երկիրը «չորեքկուսի»[12]։

Չնայած այս հարցը հանգամանորեն քննված է մեր կողմից, սակայն այստեղ ևս ավելորդ չենք համարում կրկնել անցյալում մեր տված բացատրությունը[13]։

Շիրակացին երկրի գնդաձևության տեսակետը որոշակի հայտնում է ձվի օրինակով՝ հենվելով, իհարկե, արտաքին առաջադեմ գիտնականների տեսակետի վրա. «Եւ եթէ ոք կամիցի օրինակ տեսական զարտաքնոցն լսել՝ իբր թէ զկայս երկրի նմանեցուցեալ, ինձ ի դէպ թուի ասացեալն՝ իբրև ձու. որպէս նորա դեղինն ի միջին գնդաձև կառուցեալ կայ և սպիտակն շուրջ զնովաւ, և խեճեպն պատ առեալ զամենայնիւ։ Նոյնպէս երկիրս ի միջոյ կառուցեալ կայ, և օդ շուրջ զնովաւ, և երկին պատ առեալ զամենայնիւ» (ՇՏ, էջ 10)։ Խաչատրյանը նախ խուսափել է Շիրակացու այդ կարծիքը մեջ բերելուց և բավարարվել միայն նշելով, որ «Շիրակացին ձվի օրինակը բերելիս ոչ թե երկրի գնդաձևությունն է ընդգծում, այլ պարզապես շեշտում է երկնքի կառուցվածքը, թե ինչպես դեղնուցը շրջապատված է սպիտակուցով ու կեղևով, այնպես էլ երկիրը շրջապատված է օդի, ջրի և հրի շերտով» (էջ 93)։ Շիրակացին ձվի օրինակով, որը կարող է նկատել անգամ գրաբար չգիտցող ընթերցողը, ցանկանում է ցույց տալ երկրի ձևը՝ «Երկիրն» «ինձ ի դէպ թուի ասացեալն իբրև ձու» և ոչ «երկինքը», իսկ Խաչատրյանը, աղավաղելով Շիրակացուն, համառությամբ պնդում է, թե Շիրակացին երկրի մասին չի խոսում, այլ երկնքի։ Ի դեպ, ոչ ոք, ո՛չ անտիկ և ո՛չ էլ հին հայ գիտնականներից, այդ թվում՝ նաև Շիրակացին, չեն խոսել երկիրը կրակի շերտով շրջապատված լինելու մասին։ Բայց եթե անգամ հետևելու լինենք Խաչատրյանի սխալ մեկնաբանությանը և ընդունենք, որ երկիրը իբրև թե Շիրակացին շրջապատված է համարում օդի, ջրի և հրի շերտով, այդ դեպքում ևս նշանակում է, որ երկիրը կլոր է, գնդաձև է, այլապես նա օդով, ջրով և հրով շրջապատված լինել չէր կարող։ Խաչատրյանն, ինչպես երևում է, չի մտածել, թե իր մեկնաբանությունից ինչ հետևության կարող է հանգել ուշադիր ընթերցողը։

Որպեսզի կարողանանք լիովին համոզել Խաչատրյանին, որ Շիրակացին երկիրը գնդաձև է պատկերացրել, ցանկանում ենք մեջբերում անել նաև Շիրակացու «Յաղագս շրջագայութեան երկնից՝ թէ որպէս իմաստասիրացն թուեցաւ» աշխատությունից։ Շիրակացին, խոսելով երկնքի մասին, որին «յոյնք եթերն կոչեն և քաղդեացիքն հուր թաղկեալ» և բացատրելով, թե ինչ է ներկայացնում այդ, այնուհետև նշում է, որ երկինքը «...պարզ միութեամբ, տարածեալ [է] զաւրէն վերնայարկի ձեղուան, անթիւրելի շրջափակութեամբ, բոլորաձև հարթութեամբ զերկրովս գնդանման (ընդգծումը մերն է—Ա. Ա.)[14]։ Այսինքն՝ որ երկինքն իր պարզ միացությամբ, կամարակապ առաստաղի նման, անշեղ շրջանակով և հարթ բոլորակությամբ շրջափակում է գնդաձև երկիրը։

Խաչատրյանն ուզում է մեզ վախեցնել, որ եթե մենք ընդունելու լինենք հակառակ տեսակետը, այսինքն՝ երկրի գնդաձևությունը, կհանգենք այն կար-

---

12 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 57—58։

13 Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 69—70։

14 Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 318։

ծիքին, որ «...միջնադարի մտածողների ճնշող մեծամասնությունը, դրանց թվում և եկեղեցին, ընդունել են երկրի գնդաձևությունը» (էջ 93)։ Նա մոռանում է նախ, որ մեր խոսքը տվյալ դեպքում կոնկրետ Շիրակացուն է վերաբերում և ոչ թե եկեղեցուն կամ միջնադարյան գրողներին ընդհանրապես։ Ապա՝ Խաչատրյանի այս զգուշացումից հետևում է այն, որ մենք պարտավոր ենք խուսափել ճշմարտություն ասելուց միայն այն բանի համար, որ եկեղեցուն զրկենք նման պատվեպսակից. հանկարծ չստացվի, որ եկեղեցականները ևս երկիրը գունդ են համարել։ Բայց այդ կլինի՞ արդյոք գիտություն։ Թող հայտնի լինի Խաչատրյանին, որ ոչ միայն աշխարհիկ Շիրակացին, այլև ականավոր հոգևորականներ Հովհաննես Իմաստասերը, Հովհաննես Երզնկացին, Հակոբ Ղրիմեցին և ուրիշները, հետևելով Շիրակացուն, նույնպես երկիրը գնդաձև են ներկայացրել։

Խաչատրյանը, Շիրակացուն երկիրը գնդաձև համարելու իրավունքից զրկելու համար, մատնացույց է անում մի այլ փաստ ևս. «Անանիա Շիրակացին,—գրել է նա,—ոչ միայն ընդունել է երկիրը որպես հարթություն, այլև հիմնավորել է այն՝ «գիտնալով սաղմոսից, որ աստված երկիրը հիմնադրեց ծովերի վրա» (էջ 93)։ Թող ների մեզ դարձյալ Խաչատրյանը, եթե ասելու լինենք, որ այստեղ ևս Խաչատրյանը գրաբար բնագիրը ճիշտ չի հասկացել։ Շիրակացին, իսկապես, իր Տիեզերագիտության մեջ մատնացույց է արել Սաղմոսը, բայց ոչ Խաչատրյանի բերված աղավաղումով, այլ հետևյալ ձևով. «...զի թէպէտ և լսեմ ի սաղմոսէն թէ ի վերայ ծովու հիմունս արկ նմա», այսինքն, չնայած Սաղմոսի մեջ ասվում է՝ թե երկիրը ծովի վրա է հիմնադրված, հետո շարունակում է. «...տարակուսին միտքս թէ զիա՞րդ ի վերայ այնչափ բնութեան ջուրց կայցէ անչափ ծանրութիւն երկրիս և ոչ ընկղմի» (ՇՏ, էջ 12)։ Ինչպես տեսնում ենք, Շիրակացին ոչ թե ընդունում է այն, ինչ ասվում է Սաղմոսում, այլ մեղմ ձևով քննադատում է այն. ինչպե՞ս կարող են ծովերի ջրերը պահել երկրի ահռելի ծանրությունը, ասում է նա, և թույլ չտալ, որ նա ընկղմի։

Ի դեպ, Խաչատրյանն իզուր է տարօրինակ համարում Շիրակացու Տիեզերագիտությունից մեր մատնացույց արած «...որպէս ճանճք զխնձորով պատեալ, նույնպէս և մարդիկ զերկրաւ» արտահայտությունը իբրև փաստ երկրի գնդաձևության (էջ 98)։ Մի՞թե խնձորը կլոր չէ և Շիրակացին այստեղ խնձորի բոլորձև լինելը նկատի չունի։

Այսպիսով, հարցի քննարկումը մեզ բերում է անվերապահ այն հետևության, որ ինչպես Աշխարհացույցի հեղինակը, այնպես և Շիրակացին, երկիրը համարել են գնդաձև, ուստի նրանց մեջ հակասություն փնտրել անտեղի է։

3. ԱՐԵԳԱԿԻ, ԵՐԿՐԻ ԵՎ ԼՈՒՍՆԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Խաչատրյանը գտնում է, որ Աշխարհացույցի հեղինակի և Անանիա Շիրակացու տիեզերագիտական հայացքներում հակասություն գոյություն ունի և՛ արեգակի, և՛ լուսնի մեծությունների հարցում. Աշխարհացույցի հեղինակն արեգակը փոքր է համարում երկրից, իսկ Շիրակացին, հակառակը, արեգակն է մեծ համարում երկրից (էջ 93)։

Այս հակասությունը ևս ժամանակին մատնացույց է արել Մանանդյանը. «Աշխարհացույցի հեղինակը և Անանիա Շիրակացին,—գրել է նա,—տարբեր

կարծիքի են նաև արեգակի մեծության մասին, ինչպես այդ պարզ երևում է հետևյալ հատվածներից»[15]։ Այնուհետև Մանանդյանը Շիրակացու Տիեզերագիտությունից և Աշխարհացույցից բերում է համապատասխան հատվածները։

Մանանդյանի նկատած այս հակասության մասին որոշ բացատրություն տրված է։ Մանանդյանի առաջադրած հարցի, ինչպես և նրան տրված պատասխանի կողքով, դժբախտաբար, լռությամբ է անցնում Խաչատրյանը։

Շիրակացու և Աշխարհացույցի հեղինակի մոտ այս հարցում ևս հակասություն չկա։ Աշխարհացույցի տեքստում երկրի մեծության մասին խոսվում է հետևյալ հատվածում. «Վասն որոյ ասացին զարեգակն շատ փոքր քան զերկիր. քանզի վաթսուն և վեց մասն ասեն զարեգակն, զերկուս նահանգս ասելով զբովանդակութիւն արեգական, այսինքն՝ օթևանս քառասուն» (Սուքր., էջ 3), իսկ Շիրակացու Տիեզերագիտության մեջ. «Քանզի ասեն թէ՝ է մեծութիւն լուսնոյ ըստ չափոյ երկրի. և արեգակն առաւել մեծ, քան զլուսին» (ՇՏ, էջ 58)։ Աշխարհացույցում և Տիեզերագիտության մեջ, ինչպես տեսնում ենք, դարձյալ թվարկվում են տեսակետներ, անդամ շեշտվում է՝ «ասացին», «ասեն թէ»։ Չպիտի մոռանալ, որ գիտության զարգացման այն ժամանակվա աստիճանում այնքան էլ հեշտ չէր նման հարցերի մասին համոզված և վճռական կարծիք հայտնել, ուստի Շիրակացին անհրաժեշտ է համարում բերել այս հարցում դոյություն ունեցող տարբեր գիտնականների տեսակետները։

4. ԱՐԵԳԱԿԻ ՋԵՐՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՐՑԸ

Խաչատրյանը գտնում է, թե հակասություն գոյություն ունի Աշխարհացույցի հեղինակի և Շիրակացու մոտ արեգակի ջերմության հարցում. «Աշխարհացույցի հեղինակը,—գրում է նա,—պաշտպանում է այն տեսակետը, որ արևը իր սեփական լույսն ու տաքությունն ունի», իսկ «Անանիա Շիրակացին գտնում է, որ արևն իր բնույթով սառն է, նա տաքություն և լույս է ընդունում կրակի գոտուց» (էջ 94)։

Իրականում նշված հեղինակների հայացքներում ոչ մի հակասություն չկա։ Շիրակացին արեգակի ջերմության մասին բերում է իր ժամանակի գիտական աշխարհում քաղաքացիություն ունեցող երկու տարբեր տեսակետները. նախ՝ այն տեսակետը, որ «...պատուականք յարարածս մարդիկ այնչափ միայն գիտացին զնա, թէ [արեգակն] է՛ տարր սեղմ, խիստ, մաքուր, գնդաձև, բոլոր ամենևին, անգդէզն և անսպի, ինքն է ցուրտ բնութեամբ. ջերմութիւն և լուսաւորութիւն յարփոյ առեալ հեղու յօդս» (ՇՏ, էջ 47), ապա շարադրում մյուս տեսակետը՝ «Բայց երկուք ոմանք յեկեղեցոյ՝ ո՛չ այսպէս, այլ ասացին, թէ ինքն իսկ արեգակն ունի զլոյս իւր բնութեամբն, յինքեան բնակեալ» (ՇՏ, էջ 47)։ Այսինքն՝ ոմանք ասում են, թե արեգակը սեփական լույս չունի, իսկ երկու ուրիշ գիտնականներ գտնում են, որ լույս ունի։ Խաչատրյանը, տարված Աշխարհացույցի հեղինակի և Շիրակացու հայացքներում հակասություն գտնելու ցանկությամբ, Շիրակացու բերած երկրորդ կարծիքի մասին ոչինչ չի խոսում, նրան վերադրում է առաջինը, որ դրանով

15 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 59։

կարողանա հակասություն գտնել երկու բնագրերի հեղինակների հայացքների մեջ։

Բայց եթե նույնիսկ մի պահ ընդունենք, որ այս երկու կարծիքներից Շիրակացու նախասիրությունը առաջինի կողմն է եղել, դարձյալ դժվար կլինի հակասություն տեսնել Շիրակացու և Աշխարհացույցի հեղինակի կարծիքների միջև, որովհետև վերջինում մատնացույց է արված միայն արեգակից եկող արեգակի ջերմության մասին. «...յորմէ (այսինքն՝ յարեգակէ— Ա. Ա.) ըստ հեղման շողոյն նրբացելոյ բորբութեան՝ ասացին զայրեցական գոտւոյն» (Սուքր., 3)։ Իսկ թե արեգակից եկող այդ ջերմությունն իր՝ արեգակի մեջ է, թե նա արփիից է ստանում, այդ անորոշ է մնում։

5. ԾՈՎԻ ԵՎ ՑԱՄԱՔԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Խաչատրյանը գտնում է, թե «Աշխարհացույցի հեղինակը հաստատում է, որ օվկիանոսը չի շրջափակում երկիրը, այլ գտնվում է նրա հյուսիս-արևմըտյան անկյունում», այնինչ Շիրակացին գտնում է, որ «Երկիրը շրջապատված է հսկա ծովով, որը տարածված է երկրի բոլոր կողմերում» (էջ 94)։

Իրականությունն այն է, որ Աշխարհացույցի հեղինակը երկրի շուրջ օվկիանոսը տարածված լինելու մասին բերում է երկու տարբեր հեղինակների կարծիքներ՝ Կոստանդիանոս Անտիոքացու և Պապպոս Աղեքսանդրացու։ Նախ բերում է առաջինի կարծիքը. «Եւ ոչ միայն զայրեցեալ գոտեան, այլ և զամենայն աշխարհաւ շուրջ ասեն բնակեալ, զոր Կոստանդիանոս Անտիոքացի ի Քրիստոնէական տեղագրութեան, որ ասաց զտապանն յարևելեան երկրէն առ մեզ անցեալ», ապա ավելացնում՝ «Բայց Պտղոմէոս, որոյ արք բազմաշրջութեամբ զամենայն երկիր չափեցին, ոչ ասացին զՈվկիանոս շուրջ լինել, այլ ի մի կողմանէ անգէզ հիւսիսային յարևմտից» (էջ 3)։ Խաչատրյանը, նախորդի նման, բերվող այս երկու տեսակետներից վերցնում է միայն երկրորդը, այն վերագրում է Շիրակացուն և այս ճանապարհով արհեստական հակասություն ստեղծում։

6. ԿԱՍՊԻՑ ԵՎ ՄԵՌՅԱԼ ԾՈՎԵՐԻ ՀԱՐՑԸ

Աշխարհացույցի հեղինակը, գրում է Խաչատրյանը, Հյուրկանիան և Կասպիցը նույն ծովի տարբեր անուններն է համարում, իսկ Անանիա Շիրակացին դրանք տարբեր ծովեր է համարում (էջ 95)։ Խաչատրյանը կրկնում է Մանանդյանին, որը 35 տարի առաջ գրել է. «Անանիա Շիրակացին իրարից տարբեր է համարում թյուրիմացաբար «Հյուրկանիա» և «Ասպիս» (ըստ երևույթին՝ Κασπι-) ծովերը, իսկ Աշխարհացույցի հեղինակը գիտե, որ այդ երկու անունն էլ վերաբերվում են Կասպից ծովին»[16]։

Շիրակացու Տիեզերագիտության մեջ Կասպից և Հյուրկանիա ծովերը տարբեր ծովեր անվանելու մասին ժամանակին բացատրություն է տրվել մեր «Խորենացուն վերագրվող Աշխարհացույցի հեղինակի հարցի շուրջը» աշխատության մեջ, որը ցանկանում ենք այստեղ բերել առանց փոփոխության. «Շիրակացու տիեզերագիտության ընդարձակ տեքստի համապատասխան հատվածի համեմատությունը հիմք է տալիս ենթադրելու, որ այդ պարբերու-

[16] Նույն տեղում, էջ 57։

թյան «և զնորուն ընկեր է որ կոչի Ասպիս» նախադասության մեջ ընդմիջարկություն պետք է լինի։ Մատենադարանի այն ձեռագրում, որը կրում է 2180 համարը, վերև բերված նախադասությունը դրված է աստղանիշով լուսանցքում տարբեր թանաքով»[17]։

Խաչատրյանը Մանանդյանի մատնացույց արած այս հակասությունը կրկնելուց առաջ պետք է ստուգեր Շիրակացու Տիեզերագիտության մեր մատնացույց արած ձեռագիրը և չհամոզվելու դեպքում միայն նորից առաջադրեր այն։

7. ՏԱՐՎԱ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Խաչատրյանը գտնում է, որ «Աշխարհացույցը տարվա եղանակների փոփոխությունները համարում է աշխարհագրական լայնության և արեգակի ճառագայթների անկման անկյան տարբերությունների հետևանք», իսկ «Շիրակացին ոչ թե երկիրն է բաժանում գոտիների, այլ երկնային սֆերան» (էջ 95—96)։ Խաչատրյանը, իր կարծիքը համոզեցուցիչ դարձնելու նպատակով, անհրաժեշտ է համարել Շիրակացու Տիեզերագիտության Պատկանյանի բնագրից բերել հետևյալ հատվածը. «Եւ յետ այսորիկ սկսանի մօտել արեգակն ի փոփոխմունս ամարայնոյ և երևեցուցանէ զգնացս իւր ի կողմանս հիւսիսոյ, ձգել և երկայնացուցանել զտիս։ Եւ քանզի յամրագնաց ժամօք անցանէ զօդովք երկարաձիգ գնացիւք, ջեռուցանէ ի վերայ երկրի զօդս, և ծծէ ի ներքոյ զխոնաւութիւն, երկրի»։ Ցույց տալու համար, որ մեջ բերված այդ նախադասության մեջ ամենևին խոսք չկա երկնային սֆերաների մասին, անհրաժեշտ ենք համարում թարգմանել այն աշխարհաբար. «Սրանից հետո (այսինքն գարնանային եղանակից հետո—Ա. Ա.), արեգակը սկսում է գալ, մոտենալ ամռան փոփոխված ժամանակին։ Իր ընթացքը տեսանելի դարձնելով հյուսիս, նա ձգում, երկարացնում է օրերը։ Քանի որ այդ ժամանակ արեգակն երկար ժամանակով է անցնում օդով, ուստի երկարաձիգ իր գնացքով տաքացնում է օդը և ծծում ներքից երկրի խոնավությունը»։ Ո՞ւր են այստեղ երկնային սֆերաները, ինչումն է կայանում հակասությունը, մեզ մնում է անհասկանալի։

8. ԱՆԿՅԱՆՔ ԾՈՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Խաչատրյանը գտնում է, որ Աշխարհացույցի հեղինակը դժվարանում է որոշել այն հարցը, թե անծանոթ երկրից այն կողմ ծով կա՞ թե ոչ, իսկ Շիրակացին որոշակի հայտնում է, թե՝ կա։ Այդ ապացուցելու համար Խաչատրյանը Շիրակացու Տիեզերագիտությունից բերում է հետևյալ հատվածը. «Իսկ ի ծովուն, որ շուրջ պատին երկրաւ, ոչ գոն ի նմա կենդանիք, և ոչ եզր սպառուածի, քանզի ոչ երկիր և ոչ այլ ինչ կա զնովաւ, և ոչ արեգակն անցանէ զնովաւ, այլ ընդ եզր նորա առ երկրաւ մտանէ և ելանէ»։

Աշխարհացույցի հեղինակի և Շիրակացու հայացքներում այստեղ ևս մենք հակասություն չենք կարողանում գտնել։ Աշխարհացույցի հեղինակը երբ խոսում է Անծանոթ ծովի կամ Անծանոթ երկրի մասին, թե՝ «Բայց եթէ

---

17 Ա. Գ. Աբրահամյան, Խորենացուն վերագրվող Աշխարհացույցի հեղինակի հարցի շուրջը, էջ 70—71։

շուրջ զանծանօթ երկրաւ ծով, և շուրջ զանծանօթ ծովով երկիր, մեք որպէս զանծանօթ լռեմք», դրանով չի վերջացնում, այլ շարունակում է. «Եւ գրեմք միայն զոր ետես ակն և կոխեաց ոտն մարդոյ, և զառաւելսն հրամանին Աստուծոյ վարկանիմք հաւատովք» (Սուրբ., էջ 6), այսինքն՝ այն, ինչ հայտնի է մարդկությանը, մենք գրում ենք, իսկ մյուսների մասին Աստծու կամքով կռահումներ ենք անում հավատքի ուժով։ Պատկանյանի հրատարակած Աշխարհացույցի բնագիրը, որի վրա հենվում է Խաչատրյանը, ինչպես ասել ենք, համառոտ և աղճատված բնագրերից է, մեր բերած վերջին նախադասությունը բացակայում է նրա մեջ, այդ էլ Խաչատրյանին թյուրիմացության մեջ է ձգել։

9. ԵՐԿՆԱՅԻՆ ՍՖԵՐԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԱՐՑԸ

«Աշխարհացույցի հեղինակը,—գրում է Խաչատրյանը,—գտնում է, որ կիսագնդերի հարավային տարածությունը որոշ չափով փոքր է՝ սֆերան ավելի լայն լինելու հետևանքով», իսկ «Ըստ Անանիա Շիրակացու, երկնային սֆերան բաժանված է երկու կիսագնդերի, որոնցից մեկը գտնվում է վերևում, իսկ մյուսը նայում է ցած. երկուսի արտաքին մակերևույթները հավասար են միմյանց և վերին ու ներքին կիսագնդերի տրամագծերը ճշգրտորեն համընկնում են» (էջ 97)։ Իր այդ կարծիքը հիմնավորելու համար Խաչատրյանը Շիրակացու Տիեզերագիտության «Յաղագս երկնի» գլխից բերել է մի հատված, ուից ոչինչ հասկանալ չի կարելի, որովհետև այդ հատվածից մի ամբողջ տող դուրս է ընկած, և հատվածն աղճատված է։ Սակայն այդ հատվածը բնագրով ճշտելուց ու վերականգնելուց հետո ևս չի երևում, թե այստեղ Շիրակացին իբր խոսում է երկու կիսագնդերի հավասարության մասին, հետևապես այն հակասության մեջ է մտնում Աշխարհացույցի հետ։ Վերականգնված տեքստը հետևյալն է. «Քանզի ըստ ձևոյ բուն երկնին և սա բաղկացաւ զկատարեալ ձևն առեալ և սա՝ շրջագայ անդադար ի նմանէ հարկաւորեալ։ Եւ ձև բոլոր շրջագային՝ բաժանի յերկուս կիսագունդս, զի իցէ մին ի վերոյ և միւսն հայեսցի ի ներքոյ։ Եւ հայեցուացք երկուց կիսագնդիցն հանդիպութեամբ կշիռ ուղիղ ի վերին և ի ներքին տրամագիծսն» (ՇՏ, էջ 7)։ Այս նախադասության մեջ ոչ թե խոսքը երկու կիսագնդերի հավասարության մասին է, այլ երկնակամարների երկու կիսագնդերի դեմ- հանդիման գտնվելու մասին։ Այնպես որ Խաչատրյանի առաջ քաշած այս փաստարկը ևս՝ հակասության մասին, անհիմն է։

10. ԵՐԿՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԲԵՎԵՌԻ ՀԱՐՑԸ

Խաչատրյանի համոզմամբ Աշխարհացույցի հեղինակի և Շիրակացու մոտ հակասություն կա բևեռային աստղի հարցում. Աշխարհացույցի հեղինակը խոսում է Փոքր Արջի համաստեղության մասին և որոշում նրա պտույտի շրջանակը, իսկ Շիրակացին Փոքր Արջի մասին խոսելը անիմաստ է համարում և կրկնողություն՝ հնթանոս փիլիսոփաների ասածների, քանի որ հյուսիսային այդ աստղերը չեն ծագում արևելքում և մուտք չեն գործում արևմուտքում (էջ 97)։ Ցույց տալու համար, որ Խաչատրյանը մատնացույց արած բնագրերի իմաստը ճիշտ չի հասկացել, հարկադրված ենք Փոքր Արջի մասին եղած հատվածները բերել կողք-կողքի։ Աշխարհացույցի Պատ-

կանյանի հրատարակած բնագրում ասված է. «Քանզի որ ի վերայ այրեցաժին բերին կենդանատեսակքն, մտանեն և ծագեն, բայց Փոքր Արջն գեր ի վերոյ կացեալ լինի երկրի ի հյուսիսային կողմանսն ասպարիզօք հինգ հարիւր և երկու հինգերեկօք» (էջ 1)։ Աշխարհաբար թարգմանությունը կլինի. «Այսպիսով, այրեցյալ գոտում բոլոր կենդանատեսակները մտնում են ու դուրս գալիս, իսկ Փոքր Արջը, որը գտնվում է երկրի վերին մասում, հյուսիսային կողմերը լուսավորում է միայն 500 2/5 ասպարեզ տարածություն»։ Ի՞նչ է ասված Շիրակացու մոտ. «Զաստեղաց զոր կոչեն բևեռ երկնի, որ ի տեղն գան շուրջ և ո՛չ ծագեն յելից և գան ի մուտս։ Եւ սայլք աստեղացդ, որք դէմ ընդ դէմ զօրէն անուոյ յոլովին, և այլ խումբքն, որ շուրջ զնոքօք են մշտակայ երևմամբ շրջագայանան։ Ոչ երկրորդեցից զանհամ նոցա ճառս, զի ի յոլով ասելոյ զսուտսն ձանձրոյթ ձեզ լինի» (ՇՏ, էջ 38)։ Այս հատվածը կթարգմանվի. «Երկնքի բևեռային աստղերի մասին, որոնք պտույտ են գալիս տեղում, չեն ծագում արևելքում և չեն մտնում արևմուտքում, Սայլ աստղերի մասին (այսինքն՝ Մեծ Արջի—Ա. Ա.), որոնք պտույտ են գալիս անիվի նման դեմ-հանդիման, ինչպես և նրանց շուրջը գտնվող աստղերի մասին, որոնց շրջապտույտը տեսանելի է, անհամ այս զրույցները չենք ուզում կրկնել, (որովհետև) շատ սուտ ասելը ձանձրույթ կպատճառի ձեզ»։

Դժվար չէ նկատել, որ առաջինում խոսվում է Փոքր Արջի լուսավորության սահմանափակ շրջանակ ունենալու մասին, իսկ երկրորդում՝ Փոքր և Մեծ Արջերի ու նրանց շուրջ գտնվող աստղերի վերաբերյալ տարածված «անհամ զրույցների» մասին։ Ի՞նչ հակասություն կա դրանց միջև։

11. ՀԱԿՈՏՆՅԱՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Չնայած Խաչատրյանի մոտ այս վերջին հակասությունը շատ հստակ չի ձևակերպված, բայց ընդհանուր իմաստն այն է, որ երկու հեղինակներից մեկն ընդունում է հակոտնյաների առկայությունը, իսկ մյուսը՝ ժխտում։ Այդ ապացուցելու համար Խաչատրյանը նախ բերում է ընդարձակ մի քաղվածք Աշխարհացույցից՝ բնակելի տարածության սահմանների մասին, որն ընդգրկում է հարավային լայնության 17 և հյուսիսային լայնության 63 աստիճանները և Աշխարհացույցի հեղինակի այն տեղեկությունը, որ այդ սահմաններից դուրս «...չէ ուրուք զեզր երկրի տեսեալ և կամ գիտացեալ»։ Շիրակացուց Խաչատրյանն այս անգամ մեջբերում չի անում, այլ միայն նշում է, որ Շիրակացին հակադրվել է արտաքին գիտնականներին և պնդել, որ երկրի մյուս կողմը հակոտնյաներ չկան։ Դժվար չէ նկատել, որ երկու բնագրերի հեղինակներն էլ ժխտում են հակոտնյաների առկայությունը, էլ ո՞րն է հակասությունը։

* * *

Խաչատրյանը, սակայն, չի բավարարվել այս տասնմեկ հակասություններ մատնացուցումով, այլ ցանկացել է իր նշած հակասությունները հիմնավորել պատմական փաստերով։ Նա նշել է երկու պատմական փաստեր, որոնք իբրև թե վրիպել են պատմաբանների և աղբյուրագետների ուշադրությունից։ «Գոյություն ունեն ուրիշ երկու փաստեր ևս,—գրել է նա,—որ հաստատում են այն տեսակետը, թե Շիրակացին չէր կարող Աշխարհացույցի հեղինակը լինել» (էջ 98)։ Ծանոթանանք դրանց հետ։

Առաջին փաստը՝ այդ Իտալիայում Ռավեննայի հիշատակությունն է, որպես մայրաքաղաք Հռոմին զուգընթաց։ Պրոֆ. Ք. Պատկանյանի հրատարակած Աշխարհացույցի բնագրում այդ մասին ասված է. «Իտալիան ունի երկու մայրաքաղաք՝ հոյակապ Ռավեննան և մեծ Հռոմ» (Խաչատրյանը բերում է աշխարհաբար և «սկզբնաղբյուր», ցույց տալիս ռուսական բնագիրը՝ («Армянская география VII века», էջ 9)։

Խաչատրյանը գտնում է, որ «568 թ. լանգոբարդները ներխուժեցին Իտալիա և գրավեցին այն, բյուզանդացիների ձեռքին մնաց միայն Ադրիատիկ ծովի մերձափնյա մի փոքրիկ հատվածը՝ Պո գետի գետաբերանից մինչև Անկոնա։ Այսպիսով, Ռավեննան ու Հռոմը, որպես երկու մայրաքաղաքներ, գոյություն են ունեցել VI դարի վերջերին» (էջ 98)։ Այդ փաստի հիման վրա նա գալիս է հետևյալ եզրակացության. «Ուրանով ժխտվում է այն հնարավորությունը, որ Աշխարհացույցը գրված լինի Անանիա Շիրակացու կողմից, որն ապրել է VII դարում» (էջ 98)։

Նախ ճիշտ չէ ասել, թե 568 թ. լանգոբարդները գրավել էին Իտալիայի մեծ մասը։ Իրականում նրանք գրավել էին միայն Իտալիայի հյուսիսային փոքրիկ մասը՝ Վենետիկ-Ճենովա գծից հյուսիս ընկած տերիտորիան[18]։

Երկրորդ. լանգոբարդներին չհաջողվեց Ռավեննան գրավել ոչ միայն 568 թ., այլ նրանից հետո ևս. այն մնաց բյուզանդացիների ձեռքում մինչև 751 թ. և հանդիսանում էր էքզարխության կենտրոն[19]։

Երրորդ. Աշխարհացույցում «մայրաքաղաք» տերմինը բոլոր դեպքերում չէ, որ գործ է ածվել տվյալ երկրի վարչական կենտրոնի նշանակությամբ։ Այսպես, Բյութանիայում հիշվում են երեք մայրաքաղաքներ՝ Սարդոսը, Եոլիսը և Էոնիան (Սուքր., էջ 19). Առանձնակ Ասիայում հիշվում են չորս մայրաքաղաքներ՝ Եփեսոսը, Զմյուռնիան, Պեռդանոսը և Տրալիան (Սուքր., էջ 19)։

Չորրորդ. Աշխարհացույցի ընդարձակ բնագրում Իտալիայում հիշվում է ո՛չ թե երկու մայրաքաղաք, այլ միայն մեկը՝ Հռոմը. «Իսկ ըստ հարաւոյ Սառեռինոս աշխարհք, և Լատին աշխարհ, յորում մեծն Հռոմ» (Սուքր., էջ 12)։ Իսկ ինչ վերաբերում է Ռավեննային, նա հիշվում է Իտալիայի Բիու Գալի գավառում ոչ թե «մայրաքաղաք», այլ «հոյակապ քաղաք» ձևով. «...յորում (այսինքն Բիու Գալիում—Ա. Ա.) հոյակապ քաղաքն Ռավեննա» (Սուքր., էջ 12)։ Դժբախտաբար, Խաչատրյանը չի նայել Աշխարհացույցի ընդարձակ և ավելի հին բնագիրը, որի պարունակած Իտալիայի բաժինն ավելի ընդարձակ է, ավելի շատ աշխարհագրական տեղեկություններ է պարունակում, քան Աշխարհացույցի համառոտ խմբագրությունը։

Խաչատրյանի պատմական բնույթի մյուս կռվանը այն է, որ Դվինը Աշխարհացույցում հիշվում է որպես «Ոստան»։ Աշխարհացույցի Պատկանյանի հրատարակած բնագրում «Ոստան» է հիշվում նաև Արցախում և Աղվանքում, որոնց վրա և Խաչատրյանը կառուցել է պատմական բնույթի իր երկրորդ կռվանը։

Նախ ասենք, որ հնում «Ոստան» ասելով հասկացել են ո՛չ միայն արքունի երկիր կամ արքունի տիրույթ, այլև գավառ, երկրամաս, համապա-

[18] „Советская историческая энциклопедия", հատ. 8, էջ 395 (տե՛ս „Лангобарды" բառը և քարտեզը)։
[19] Նույն տեղում, էջ 396։

տասխան պարթևական ostan-ին։ Ընդարձակ խմբագրության մեջ այդ իմաստով էլ, հավանաբար, գործ է ածված (Ազատ գետն) «...իջանելով ընդ Դուին արրուցանէ զամենայն Ոստանն Հայոց» (Սուքր., էջ 31)։ Ինչ վերաբերում է Արցախում հիշված Ոստանին, ապա վաղուց է պարզված, որ այդ աղավաղում է. այն չկա ո՛չ Աշխարհացույցի ընդարձակ բնագրում (տե՛ս Սուքր., էջ 30), ո՛չ էլ 1944 թ. մեր հրատարակած բնագրում[20]։ Բացահայտ թյուրիմացության արդյունք է նաև «Ոստանն ի մարծպան» արտահայտությունը, որը մատնացույց է արել Խաչատրյանը (էջ 98), քանի որ այն ևս չկա վերև հիշված երկու բնագրերում[21]։ Խաչատրյանը կարող է մեզ առարկել՝ մատնացույց անելով Ս. Տ. Երեմյանի «Հայաստանը ըստ «Աշխարհացույցի» աշխատությունը։ Սակայն այդ էլ չի արդարացրել իրեն, քանի որ Երեմյանը նրանք բերել է քառակուսի փակագծի մեջ՝[22] ցանկանալով ասել, թե այդ բնագրինը չէ։

Վերևում ասել ենք, որ Աշխարհացույցը դարերի ընթացքում ընդօրինակությունների ժամանակ ենթարկվել է ղգալի փոփոխությունների. կատարվել են խմբագրումներ, տեղ-տեղ բնագիրը ենթարկվել է կրճատումների, բնագրում մուտք են գործել ընդմիջարկություններ և այլն։ Այդ բոլորը բազմաթիվ փաստերի հիման վրա ցույց է տրված մեր «Խորենացուն վերագրվող Աշխարհացույցի հեղինակի հարցի շուրջը» խորագրով աշխատության մեջ։ Թվում է, թե Խաչատրյանը պետք է հաշվի առներ այդ և չկառչեր Պատկանյանի հրատարակած սխալաշատ բնագրին։

Միջնադարյան գրիչները ևս որոշ սխալներ կատարում էին, գրչագրերը ձեռքից-ձեռք արտագրելու ժամանակ այդ սխալները կուտակվում և որակ էին ստեղծում։ Ահա թե ինչու անհավանական չէ, որ Աշխարհացույցում և Տիեզերագիտության բնագրերում լինեն երբեմն իրար հակասող դրույթներ՝ մուծված ուշ դարերում։ Անհավանական չէ նաև, որ նույն հարցի մասին Շիրակացու տարբեր աշխատություններում լինեն տարբեր կարծիքներ։ Պետք է նկատի ունենալ, որ խոսքը վերաբերում է տիեզերագիտական այնպիսի բարդ հարցերին, որոնք միջնադարյան խավար իրականության մեջ հստակ և համոզեցուցիչ լուսաբանություն դեռ չէին ստացել։ Չենք խոսում գեռ այն սարսափի մասին, որ կարող էին ունենալ Աստվածաշնչի հայացքներին դեմ արտահայտվող գիտնականները։ Բոլոր դեպքերում, Աշխարհացույցի հեղինակը որոշելու համար պետք չէ ունելիքով բառեր դուրս քաշել բնագրերից և նրանց հիման վրա բռնաձիգ եզրահանգումներ կատարել։

Աշխարհացույցը, ինչպես ապացուցել է Հեուսենը իր վերջերս լույս ընծայած ուսումնասիրության մեջ, գրված է VII դարի 30—40-ական թթ., այն ժամանակ, երբ արաբական զորաբանակը կենտրոնացված է եղել Պարսկաստանի սահմանի վրա, բայց նա դեռ նվաճված չի եղել, իսկ այդ տարիները լիովին համընկնում են Շիրակացու ստեղծագործական շրջանի հետ[23]։

Աշխարհացույցում կիրառված գոտիների աստիճանավորումից, ինչպես և կոտորակային բարդ թվերի գործածությունից երևում է, որ նրա հեղինակն աչքի ընկնող մաթեմատիկոս է եղել, որպիսին էր Շիրակացին։

---

20 Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացի, էջ 350։

21 Նույն տեղում, էջ 348։

22 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Ախարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 105 և 109։

23 R. H. Hewsen, նշվ. աշխ., էջ 423—432։

Աշխարհացույցի ձեռագիր հին ընդօրինակությունները մեծ մասամբ հանդիպում են Շիրակացու աշխատությունների ժողովածուներում։

Ապացուցված է, որ Աշխարհացույցը, «Երկրաչափք» անվան տակ (ինչպիսին ունեն Աշխարհացույցի հին ձեռագրերը) ծանոթ է եղել XI դարի ականավոր գիտնական Գրիգոր Մագիստրոսին՝ իբրև Շիրակացու աշխատություն։

Աշխարհացույցի շարունակությունն են կազմել «Մղոնաչափքը», «Աստղաբաշխական երկրաչափությունը» և «Ընծայականը», որոնք Շիրակացու աշխատություններն են։

Շիրակացու թվաբանական խնդիրների և Աշխարհացույցի միջև մատնացույց են արվել պատմական փաստերի, լեզվի, ոճի բացարձակ նմանություններ և այլն, որոնք դարձյալ ապացույց են հեղինակների նույնության։

Մեր ձեռքի տակ եղած բոլոր փաստերը վկայում են, որ Աշխարհացույցի հեղինակը հանդիսանում է հայ հանճարեղ գիտնական Անանիա Շիրակացին։

ПРОБЛЕМА АВТОРСТВА «АШХАРАЦУЙЦ»-а

Проф. А. Г. АБРАМЯН

(Резюме)

Несмотря на то, что источниковедческими исследованиями, казалось, окончательно выяснено, что автором «Ашхарацуйц»-а (армянской географии VII в.) является армянский ученый Анания Ширакаци, в последнее время появились ученые, у которых опять возникли сомнения об авторе «Ашхарацуйц»-а (см. «Историко-филологический журнал», 1968, № 4).

На основании рукописных и опубликованных списков текста «Ашхарацуйц»-а в статье подвергаются детальному анализу выдвинутые факты и доказывается их несостоятельность. Большинство этих фактов, взятых из «Ашхарацуйц»-а, является интерполяциями, внесенными в текст поздними переписчиками. Сравнение космографических и географических взглядов автора «Ашхарацуйц»-а и Ширакаци не показывает каких-либо противоречий. Что же касается времени создания «Ашхарацуйц»-а, то он мог быть написан в сороковых годах VII в., т. е. в творческий период Анания Ширакаци. Таким образом, автором «Ашхарацуйц»-а, бесспорно, является Анания Ширакаци.